ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.), *Երևան, «Տիգրան Մեծ», 2009, 244 էջ:*

Վերջին շրջանում բավական արդյունավետ ուսումնասիրություններ են կատարվում հայոց ազգային կուսակցությունների պատմության ուսումնասիրության ուղղությամբ:

Անկախության հռչակումից հետո մեծ ծավալի աշխատանքներ կատարվեցին Հայ հեղափոխական դաշնակցության պատմության ճշմարտացի ուսումնասիրման ոլորտում, այժմ հետազոտման նյութ են դառնում Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Ռամկավար-ազատական կուսակցությունների պատմությունները:

Սա անհրաժեշտ և ողջունելի քայլ է, քանի որ միայն ավանդական կուսակցությունների ամբողջական պատմության վերականգնումով հնարավոր կլինի պարզորոշ ներկայացնել XIX դարավերջի և XX դարասկզբի հայկական իրականության ճշմարիտ պատկերը և պատասխանել այն հարցերին ու հարցադրումներին, որ այսօր էլ հուզում են հայ (և ո՛չ միայն հայ) հանրությանն ու տվյալ հիմնահարցով զբաղվող մասնագետներին:

Սույն հիմնախնդիրը ուղղակիորեն առնչվում է նաև Հայոց ցեղասպանությանը, քանի որ այն ժխտող թուրքական քարոզչության հիմնական դրույթներից մեկն էլ այն է, որ հայ քաղաքական կուսակցություններն իրենց գործունեությամբ հրահրել են ջարդերն ու կոտորածները:

Հրապարակի վրա գտնվող ուշագրավ աշխատությունը պատկանում է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սուրեն Սարգսյանի գրչին: «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.)» վերտառությամբ աշխատությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ: Գրքի խմբագիրն է անվանի գիտնական, պատմագիտության դոկտոր Էմմա Կոստանդյանը:

Աշխատությունը բաղկացած է երեք գլուխներից, ինչպես նաև օգտագործված գրականության ու աղբյուրների ցանկից, կուսակցության գործունեությունը ներկայացնող լուսանկարներից և սխեմաներից: Ներածականում հեղինակը նշում է, որ ՀՍՌԿ-ի բազմաբովանդակ գործունեությունը շարադրվում է հայ ազատագրական շարժման ընդհանուր տեսապատկերի վրա՝ սերտորեն շաղկապված տվյալ ժամանակաշրջանի ազատագրական անցուդարձերի հետ: Ինչպես հետազոտողն է իրավացիորեն ընդգծում, խորհրդահայ պատմագիտությունը չէր խրախուսում ոչ կոմունիստական կուսակցությունների պատմության ուսումնասիրությունը: Եթե անգամ այդպիսիք գրվում էին, ապա միայն կոմկուսի գաղափարական ստանդարտների շրջանակներում: Ահա այդ պառճառով է, որ հայրենի ընթերցողը ծանոթ ու քաջատեղյակ չի եղել հայ ազգային ավանդական կուսակցությունների պատմությանը: ՀՍՌԿ-ի վերաբերյալ անգամ սփյուռքում չի գրվել ամբողջական ուսումնասիրություն:

Վերոնշյալ բացը լրացնում է սույն աշխատությունը, որում շարադրված է Սահմանադիր ռամկավար կուսակցության պատմության ամբողջական ընթացքը՝ նրա կազմավորման օրերից մինչև 1921 թվականը: Ըստ հեղինակի, աշխատության համար հիմք են ծառայել մի շարք սկզբնաղբյուրներ, որոնցից իրենց նշանակությամբ կարևորվում են հատկապես արխիվային նյութերը, այդ կուսակցության նշանավոր գործիչների (Ա. Դարբինյան, Մ. Թերլեմեզյան, Ա. Եկարյան) թողած հուշագրությունները, ինչպես նաև կուսակցության հրատարակած տպագիր մամուլի («Ազգ», «Վան-Տոսպ», «Արև») ընձեռած նյութերը:

Առաջին գլխում («Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության կազմավորումը») անդրադարձ է կատարվում Ար-

մենական կուսակցության կազմավորման ընթացքին: Եվ դա պատահական չէ, քանի որ արմենականները հանդիսացել են ՀՍՌԿ-ի նախատիպը: Մանրամասնվում և պարզաբանվում են արմենականների կազմավորման տեղի ու ժամանակի, կուսակցության ծրագրի հետ կապված որոշ հարցականներ:

Հեղինակը ներկայացնում է նաև հասարակական-քաղաքական այն հոսանքները («Գաղափարակցական միություն», «Վերակազմյալ հնչակյան կուսակցություն», «Միացյալ հայ հեղափոխական կազմակերպություն»), որոնց միաձուլումով սկիզբը դրվեց Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության կազմավորմանը: Սակայն վերոնշյալ միավորումը և միաձուլումը գաղափարաքաղաքական բարդ մի գործընթաց էր, և հետազոտողը բացահայտում է վերոնշյալ գործընթացի փուլերն ու գաղափարական ելևէջները: Հստակություն է մտցվում ՀՍՌԿ-ի կազմավորման վայրի վերաբերյալ եղած հարցերում: Ըստ հեղինակի՝ միավորման գործընթացը սկսվել և տարվում էր միաժամանակ երկու քաղաքներում, բայց իրականում կուսակցության հիմնադրման մասին վերջնական փաստաթուղթը և ծրագիրն ընդունվել են Ալեքսանդրիայում (Եգիպտոս), որն էլ կուսակցության հիմնադրման վայրն է (էջ 69):

Պետք է նշել, որ թեև ՀՍՌԿ-ը հիմնադրվեց օտար հողի վրա, սակայն նրա ողջ գործունեությունն ընթացավ հայրենիքում՝ արևմտահայկական և արևելահայկական իրականության մեջ: Վերլուծելով նորաստեղծ կուսակցության ծրագրային դրույթները՝ հեղինակն իրավացիորեն նշում է, որ դրանք մերժում էին սոցիալիզմի գաղափարախոսությունը, և, ընդհանրապես, «հեռու մնալով վիճելի վարդապետություններե», խնդիր էր դրվում տնտեսական բնագավառում կապիտալի ազատ զարգացման:

Ընդհանրացնելով ծրագրին ու գործելակերպին վերաբերող նյութը, հեղինակը եզրակացնում է, որ ստեղծվում էր տիպիկ բուրժուական կամ որ նույնն է՝ ունևոր ապրանք արտադրողների կուսակցություն, որը մերժում էր հեղափոխական պայքարը և որդեգրում կառուցողական բարենորոգչական վարքագիծ (էջ 71):

Թերևս այստեղ պետք է նշել, որ սույնով, փաստորեն, նորաստեղծ կուսակցությունը հեռանում էր արմենականության ավանդներից, որոնք նախատեսում էին Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական լծից հեղափոխական ճանապարհով: Վերստին անդրադառնալով սահմանադիր-ռամկավարների գործելակերպին ու հռչակած գաղափարական ուղղվածությանը՝ հեղինակը ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ ռամկավար առաջնորդները բացառապես արևմտահայեր էին, քաջածանոթ թուրքական բիրտ իրականությանը, և շատերն իրենց մաշկի վրա զգացել էին բռնատիրության հալածանքն ու ճնշումը, ուստի հաշվի էին առել վերոնշյալ իրականությունից բխող այն բոլոր առանձնահատկություններն ու խոչընդոտները, որոնք կնպաստեին կամ կարգելակեին իրենց մտադրությունների իրականացմանը:

Երկրորդ գլխում («ՀՍՌԿ գործունեությունը 1908–1919 թթ.): Փուլ առ փուլ ներկայացված է ռամկավարների՝ որպես ամրակուռ կուսակցության կայացումը, նրանց ծավալած հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությունը ազգային կյանքի բախտորոշ ու տագնապալից ժամանակաշրջանում: Մասնավորապես, քննության են առնվում ռամկավարների որդեգրած դիրքորոշումները Թուրքիայի ներքին գործելակերպի, հայկական բարենորոգումների իրագործման խնդրի հանդեպ:

Եվս մեկ անգամ շեշտադրվում է այն միտքը, որ ռամկավարներն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում հայոց ազգային կուսակցությունների համերաշխության և համագործակցության խնդիրներին: Արտահայտելով կուսակցության պաշտոնական տեսակետը՝ «Վան-Տոսպը» 1913 թվականին կոչ է անում կուսակցություններին՝ մի կողմ թողնել ներքին տարաձայնությունները և համախմբվել «տաճկահայության հարցին շուրջը» (էջ 84):

Անչափ բնութագրական է այն փաստը, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռամկավարները հանդես են գալիս ինքնապաշտպանության գործի կարևորումով, գտնելով, որ այն շատ թերի վիճակում է: Այդ բացը լրացնելու նպատակով նրանք փորձում են ձևավորել «Ազգա-

յին պաշտպանության կոմիտեն», որը պետք է իրականացվեր «կուսակցական նեղմիտ մտածումներե բարձր գետնի մը վրա ամեն խավերու համերաշխության ստեղծումով» (էջ 87): Աշխատության հետաքրքրական ենթագլուխներից է «ՀՍՌԿ դիրքորոշումը Առաջին աշխարհամարտի, Հայոց եղեռնի և կամավորական շարժման նկատմամբ» բաժինը, որում տրված են պատմական ընթացքից բխող ճշմարիտ դիտարկումներ ու եզրահանգումներ:

Աշխատության երրորդ գլխում ներկայացված է ՀՍՌԿ-ի գործունեությունը 1919–1921 թվականներին, որը վերոնշյալ կուսակցության տարեգրության առավել բուռն ու արգասավոր շրջանն է: Հետաքրքրական դիտարկումներ ու վերլուծություններ են կատարված բնորոշելու և բնութագրելու կուսակցության վարած քաղաքականությունը պետականություն ձեռք բերած Հայաստանում, ինչպես նաև կուսակցության գործունեությունը Կիլիկիայում: Ենթաբաժիններից մեկը նվիրված է ռամկավարների ջանքերի լուսաբանմանը՝ փրկելու գաղթական ու տարագիր հայության բեկորները սովից, համաճարակներից, ֆիզիկական բնաջնջումից: Աշխատության վերջին ենթագլուխը («Ազգային Ազատական կուսակցություն: Համախմբման ավարտը և ՌՍԿ-ի ծնունդը») ներկայացնում է Ռամկավարազատական կուսակցության ձևավորման գործընթացը:

Որպես ամփոփում նշենք, որ Սուրեն Սարգսյանի այս աշխատությունը նոր էջ է բացում հայ ազգային կուսակցությունների պատմության ուսումնասիրության ոլորտում: Հեղինակը գիտական, անկողմնակալ անաչառությամբ շարադրում է մի ամբողջ դարաշրջանի պատմություն՝ գերծ մնալով միակողմանի գնահատականներից ու հարցադրումներից: Թերևս կարևոր գործոններից մեկն էլ այն է, որ հեղինակը չի հավակնում անսխալական լինելուն ու տեղ է թողնում հետագա հետազոտողների և ուսումնասիրողների համար:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ